ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N ---- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի դրույթները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» N308-Ա որոշումը (Որոշում) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր՝ 5-րդ կետով.

«5. Սույն որոշման իմաստով ընտանիքի անդամներ են հանդիսանում ամուսինները, ծնողները և զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), տատը և պապը, եթե նրանք Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված զոհվածի կամ մահացածի մահվան օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում, ինչպես նաև քույրերը և եղբայրները, եթե վերջիններս Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված զոհվածի կամ մահացածի մահվան օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում և ամուսնացած չեն եղել:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ընտանիքի անդամներ» հասկացությունը որպես այդպիսին սահմանված չէ, և իրավական ակտերում ընտանիքի անդամներ կարող են հանդիսանալ տարբեր անդամներ, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» N308-Ա որոշման իմաստով հստակեցնելու ընտանիքի կազմը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N308-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N308-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N308-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ